

5.11. ՀՀ տարածքի 2004թ. հիդրոոդերևութաբանական պայմանների համառոտ բնութագիրը

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հանրապետությունում տարեկան միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով, տեղ-տեղ՝ 3-4 աստիճանով, բացառությամբ Սյունիքի հովիտների, որտեղ այն ցածր է եղել նորմայից 1 աստիճանով, իսկ Երևանում՝ 2 աստիճանով:

Օդի ամսական միջին ջերմաստիճանը հունվարին և փետրվարին նորմայից բարձր է եղել 1-4 աստիճանով, մարտին՝ 3-5 աստիճանով: Բարձր ջերմաստիճան է գրանցվել մարտի 1-6-ին և 21-28-ին, առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում հասել է $+30$ $+31^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում և Տավուշում՝ $+23$ $+28^{\circ}\text{C}$, Լոռիում և Սյունիքի նախալեռներում՝ $+15$ $+20^{\circ}\text{C}$, լեռնային շրջաններում՝ $+11$ $+16^{\circ}\text{C}$:

Առանձին օրեր՝ հունվարին Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում, փետրվարին՝ առավելապես արևելյան շրջաններում և մարտին՝ ամենուրեք, օդի առավելագույն ջերմաստիճանը գերազանցել է այդ վայրերում երբևէ գրանցված տվյալ օրվա բացարձակ առավելագույն արժեքները:

Ապրիլին ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում և ցածր նորմայից 1 աստիճանով: Հյուսիս-արևմուտքից ցուրտ օդի ներթափանցմամբ պայմանավորված չափազանց ցածր ջերմաստիճան է գրանցվել ապրիլի 5-ի գիշերը, երբ օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 8-13 աստիճանով: Նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է -16 -21°C (Մասրիկում /Գեղարքունիքի մարզ/ -23°C), Լոռիում՝ -11 -16°C , Տավուշում, Արարատյան դաշտում և Սյունիքի նախալեռներում՝ -5 -10°C , Սյունիքի հովիտներում՝ -2 -4°C : Այդ օրը գրանցված նվազագույն ջերմաստիճանները ցածր են եղել ապրիլին երբևէ գրանցված բացարձակ նվազագույն ջերմաստիճաններից:

Մայիսին և հունիսին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում, տեղ-տեղ՝ բարձր նորմայից 1-2 աստիճանով, հուլիսին ցածր է եղել նորմայից 0.7-1.6 աստիճանով:

Օգոստոսին ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-2, լեռնային առանձին շրջաններում և Երևանում՝ 3 աստիճանով, սեպտեմբերին այն եղել է նորմայի սահմաններում, տեղ-տեղ՝ նորմայից 1 աստիճանով բարձր, հոկտեմբերին՝ բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով, Աշոցքում (Շիրակի մարզ)՝ 1 աստիճանով ցածր:

Նոյեմբերին ամսական միջին ջերմաստիճանը տարածքի մեծ մասում մոտ է եղել նորմային, տեղ-տեղ նորմայից բարձր՝ 1 աստիճանով, Կոտայքի և Արագածոտնի լեռնային առանձին շրջաններում՝ ցածր 1 աստիճանով: Դեկտեմբերին ամսական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-5 աստիճանով:

Տարեկան տեղումների քանակը եղել է նորմայի սահմաններում և կազմել նորմայի 90-119%-ը, միայն Արարատյան դաշտի առանձին կայաններ գրանցել են տեղումների ցածր քանակ, այն կազմել է նորմայի 43-65%-ը:

Ամսական տեղումների քանակը հունվարին հանրապետության տարածաշրջանների մեծ մասում ցածր է եղել նորմայից և կազմել նորմայի 54-77%-ը: Արարատյան դաշտում այն եղել է նորմայի սահմաններում, Աշոցքում, Տաշիրում (Լոռու մարզ) և Ապարանում (Արագածոտնի մարզ)՝ նորմայից բարձր և կազմել նորմայի 129-140%-ը: Հունվարին Արարատյան դաշտում և նրա նախալեռներում առանձին օրեր դիտվել է մառախուղ:

Փետրվարին Լոռիում, Տավուշում, Կոտայքում, Գեղարքունիքում և Արագածոտնի լեռնային առանձին շրջաններում ամսական տեղումների քանակը կազմել է նորմայի 105-168%-ը, Արարատյան դաշտում, Շիրակում, Սյունիքում և Արագածոտնի նախալեռներում՝

27-78%-ը: Փետրվարի 14-ին Սիսիանում (Սյունիքի մարզ) դիտվել է տարվա առաջին ամպրոպը:

Մարտին ամսական տեղումների քանակը Տավուշում, Լոռիում, Գեղարքունիքի առանձին շրջաններում, Կոտայքում, Վայոց ձորում և Գորիսում (Սյունիքի մարզ) կազմել է նորմայի 110-140%-ը, Արագածոտնում, Շիրակում և Մասրիկում` 70-80%-ը, Արարատյան դաշտում և Սյունիքում` 30-70%-ը:

Ապրիլին ամսական տեղումների քանակը Արարատյան դաշտում, Գեղարքունիքում, Տավուշում, Լոռիում, Շիրակում և Սյունիքի նախալեռներում կազմել է նորմայի 97-156%-ը, Թալինում (Արագածոտնի մարզ), Քաջարանում և Կապանում (Սյունիքի մարզ)` 40-75%-ը:

Մայիսի 1-ի դրությամբ հանրապետությունում ձյան ծածկը պահպանվել է 2500 մ և ավելի բարձրությունների վրա: Մայիսին ամսական տեղումների քանակը Լոռիում, Շիրակում, Տավուշում, Գեղարքունիքում, Արարատյան դաշտում և Սյունիքում կազմել է նորմայի 110-147%-ը, Արարատյան դաշտի նախալեռներում, Արագածոտնի լեռնային շրջաններում և Կոտայքում` 70-90%-ը:

Հունիսին ամսական տեղումների քանակը Տավուշում, Շիրակում և Գեղարքունիքում կազմել է նորմայի 105-160%-ը, Լոռիում` 142-209%-ը, Արարատյան դաշտում և նրա նախալեռներում` 75-150%-ը, Սյունիքում, Արագածոտնի լեռնային շրջաններում` 43-75%-ը:

Հուլիսին ամսական տեղումների քանակը Շիրակում, Լոռիում, Արարատյան դաշտում և Արագածոտնում կազմել է նորմայի 25-80%-ը, Տավուշում, Գեղարքունիքում, Սյունիքում և Կոտայքում` 120-180%-ը:

Օգոստոսին ամսական տեղումների քանակը Շիրակում, Լոռիում և Տավուշում կազմել է նորմայի 108-134%-ը, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնում` 29-67%-ը, Արարատյան դաշտում և Սյունիքում` 6-27%-ը:

Սեպտեմբերին ամսական տեղումների քանակը Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնի լեռնային շրջաններում կազմել է նորմայի 95-161%-ը, Արարատյան դաշտում, Սյունիքում, Շիրակում, Վայոց ձորում և Գեղարքունիքի առանձին շրջաններում` 5-65%-ը:

Հոկտեմբերին ամսական տեղումների քանակը Արարատյան դաշտում, Տավուշում, Սյունիքում և Վայոց ձորում կազմել է նորմայի 85-115%-ը, Լոռիում, Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքում և Արագածոտնի լեռնային շրջաններում` 28-67%-ը:

Նոյեմբերին ամսական տեղումների քանակը Լոռիում, Տավուշում, Գեղարքունիքում, Կոտայքում, Արագածոտնում և Վայոց ձորում կազմել է նորմայի 120-180%-ը, Սյունիքում` 150-200%-ը, Արարատյան դաշտում` 69-98%-ը:

Դեկտեմբերին ամսական տեղումների քանակը ցածր է եղել նորմայից և կազմել նորմայի 5-39%-ը, Սյունիքում և Մասրիկում` 45-92%-ը, Լոռիում և Տավուշում տեղումներ չեն գրանցվել:

Հիդրոոդերևութաբանական վտանգավոր երևույթներից Արագածոտնում, Լոռիում, Գեղարքունիքում, Տավուշում և Արարատյան դաշտում դիտվել է քանու ուժգնացում: Քանու արագությունը հասել է 16-20 մ/վրկ, պոռթկումները` 25-30 մ/վրկ: Հատկապես ուժեղ քանի է դիտվել մարտի 5-6-ին` Տավուշում և Գեղարքունիքում: Քանու արագությունը հասել է 34-45 մ/վրկ: Ողջ դիտարկումների ընթացքում այս վայրերում երբևիցե նման ուժեղ քանիներ չեն գրանցվել: Նոյեմբերի 23-ին Թալինում դիտվել է գետնաբուք` 25-28մ/վրկ արագությամբ, 27-ին Ապարանում տեղացել է թաց ձյուն և տեղումների քանակը 9 ժամվա ընթացքում կազմել է 20 մմ: Դեկտեմբերին Արարատյան դաշտում և Կոտայքում դիտվել է մառախուղ: